

† † † **HOKEHANKISD** † † †

**ARTO ALBEYAZ
TO THE SOULS OF ALBEYAZ, BALJIAN,
TANIELIAN AND GHAZELIAN FAMILIES**

(30th Anniversary)

Requested by: Der Hayr and Board of Trustees
Zvart Albeyaz
Sergio and Janet Tovar
Mike and Alice Krikorian and Family



CHURCH ATTENDANCE PROCEDURE:

- You MUST call and RESERVE your seat by the Saturday BEFORE Sunday's service.
- You MUST wear a MASK when you are on church property at ALL times.
- Upon entrance into the church foyer you MUST sign in and follow COVID-19 protocols.




2020 Membership Dues – Parishioners who have not paid their 2020 Annual Membership dues are encouraged to remit payment. The membership fees are \$150.00 for adults and \$50.00 for each full time student, ages 18-26. These dues are 100 percent tax deductible.



**Ս. ԽԱՉ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN
APOSTOLIC CHURCH**

☞ **SUNDAY, JANUARY 17, 2021** ☛



ՉԱՅՆ ԱՁ

**ԱՆՈՒՄՆԱԿՈՉՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ Ա. ԿԻՐԱԿԻ
FIRST SUNDAY AFTER NATIVITY**

This Sunday's service will be open to the public, with limited seating, according to COVID-19 guidelines.

Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում
Divine Liturgy 10:30 A.M. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m.-2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Website: www.soorpkhatch.org
Rev. Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ՏԻՄՈԹԷՈՍԻ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ**

----- (1 . 5 - 11) -----

Գերագոյն պատուիրանը սէրն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէն բխած սէրը: Շատեր այս պատուէրները մոռցած, դատարկ վիճարանութեանց մէջ մտնելով՝ մեզի Օրէնք սորվեցնելու ելեր են, մինչդեռ ո՛չ իրենց խօսածը գիտեն, ո՛չ ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն:

Գիտենք թէ Օրէնքը լաւ է՝ երբ պէտք եղած ձեւով գործադրուի: Սակայն գիտենք նաեւ, թէ Օրէնքը արդարներուն համար դրուած չէ, այլ՝ անօրէններուն եւ անհնազանդներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, սրբութիւնները ոտնակոխ ընողներուն ու պիղծերուն, հայր ու մայր անարգողներուն, մարդասպաններուն, պրոռնկութիւն ընողներուն, արուագէտներուն, մարդ առեւանգողներուն, ստախօսներուն, սուտ երգում ընողներուն, եւ բոլոր այն արարքներուն համար, որոնք հակառակ են իմ փոխանցած առողջ ուսուցումներուս. պատուէրներու, որոնք համաձայն են երանելի Աստուծոյ փառքը պատմող Աւետարանին, որ ես հաւատարմօրէն քարոզեցի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ - (2 . 1 - 11) -

Յիսուսի Գալիլեա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրաւիրուած էին հարսանիքին:

Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ. «Գինի չունին»: «Մա՛յր, մեզի ի՛նչ», պատասխանեց Յիսուս, «Իմ ժամանակս տակաւին չէ հասած»: Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. «Ինչ որ ըսէ՛ ձեզի՝ կատարեցէ՛ք»:

Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իւրաքանչիւրը ութսունէն հարիւր լիթր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն. «Կարասները ջուրով լեցուցէք»: Եւ սպասաւորները լեցուցին մինչեւ բերան: Յետոյ ըսաւ անոնց. «Հիմա առէք եւ սեղանապետին տարէք»: Անոնք ալ տարին:

Սեղանապետը համեսեց գինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ թէ ուրկէ էր. թէ եւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին, գիտէին: Այն ատեն սեղանապետը փեսային ըսաւ. «Ամէն մարդ նախ ընտիր գինին կը հրամցնէ, իսկ երբ գինովնան՝ այն ատեն հասարակը, մինչ դուն ընտիր գինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլեայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր Փառքը յայտնեց, եւ իր աշակերտները հաւատացին իրեն:

 **SCRIPTURE READINGS** 

TIMOTHY 1:5-11

The goal of this command is love, which comes from a pure heart and a good conscience and a sincere faith. Some have wandered away from these and turned to meaningless talk. They want to be teachers of the law, but they do not know what they are talking about or what they so confidently affirm.

We know that the law is good if one uses it properly. We also know that law is made not for the righteous but for lawbreakers and rebels, the ungodly and sinful, the unholy and irreligious; for those who kill their fathers or mothers, for murderers, for adulterers and perverts, for slave traders and liars and perjurers-and for whatever else is contrary to the sound doctrine that conforms to the glorious gospel of the blessed God, which he entrusted to me.

JOHN 2:1-11

On the third day a wedding took place at Cana in Galilee. Jesus' mother was there, and Jesus and his disciples had also been invited to the wedding. When the wine was gone, Jesus' mother said to him, "They have no more wine."

"Dear woman, why do you involve me?" Jesus replied. "My time has not yet come." His mother said to the servants, "Do whatever he tells you."

Nearby stood six stone water jars, the kind used by the Jews for ceremonial washing, each holding from twenty to thirty gallons. Jesus said to the servants, "Fill the jars with water"; so they filled them to the brim. Then he told them, "Now draw some out and take it to the master of the banquet.

"They did so, and the master of the banquet tasted the water that had been turned into wine. He did not realize where it had come from, though the servants who had drawn the water knew. Then he called the bridegroom aside and said, "Everyone brings out the choice wine first and then the cheaper wine after the guests have had too much to drink; but you have saved the best till now. "This, the first of his miraculous signs, Jesus performed at Cana in Galilee. He thus revealed his glory, and his disciples put their faith in him.



ԹԻ ԻՆՉՊԷՍ ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

Հայ Եկեղեցին կը տօնախմբէ ու կը պանծացնէ յիշատակը Քրիստոնէական Ընդհանրական Եկեղեցւոյ սուրբերէն՝ Քրիստոսի տասներկու առաքեալներուն, որոնք բոլորն ալ նահատակուած են քարոզչութեան ընթացքին:

1. Ս. ՄԱՏԹԷՆՈՍ ԱՌԱՔԵԱԼ


Մատթէոս կը նշանակէ «Պարգեւ»: Կափառնայումէն էր եւ արհեստով՝ մաքսաւոր: Հրէական անունն էր Ղուրի կամ Լեւի: Քարոզած է Պաղեստինի Ափրիկէի մէջ: Ենթարկուած է մեծ չարչարանքներու եւ նահատակուած սուրով՝ Եթովպիոյ մէջ:

2. Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼ

Առաքեալներէն ամենակրտսերն է: Իրեն եւ եղբօր՝ Յակոբոս առաքեալին Յիսուս անուանած է «Որոտման որդիներ»՝ իրենց ըմբոստ նկարագրին համար: Որդին էր Ջերեղէոսի եւ Սալումէի: Եղած է ձկնորս: Քարոզած է Փոքր Ասիոյ եւ Եփեսոսի մէջ: Մահուան դատապարտուելով, եռացած ջուրով եւ ձեթով լեցուն կաթսայի մէջ կը նետուի, սակայն հրաշքով կը փրկուի եւ Պաթմոս կղզին կ'աքսորուի: Հոն կը գրէ իր Յայտնութեան Գիրքը: Հետագային բանտէն ազատ արձակուելով, բնական մահով, խոր ծերութեան մէջ կը վախճանի:

3. Ս. ՅԱԿՈՒԲՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ջերեղիոսի որդին, Յովհաննէս առաքեալի եղբայրը, կոչուած է նաեւ Աւագ կամ Երէց՝ ի տարբերութիւն միւս՝ Յակոբոս Կրտսեր առաքեալի: Արհեստով ձկնորս էր: Որպէս զօրաւոր եւ եկեղեցւոյ հեղինակաւոր առաջնորդ՝ Յակոբոս կը գլխատուի Երուսաղէմի մէջ, Հերովդէս արքայի հրամանով:



HOW THE APOSTLES OF CHRIST WERE MARTYRED

The Armenian Church celebrates and glorifies the memory of the saints of the Christian Universal Church, the twelve apostles of Christ, all of whom were martyred during the preaching.

1. ST. MATTHEW THE APOSTLE

Matthew means "Gift". He was from Capernaum and was a customs officer by trade. The Jewish name was Jui or Levi. Preached in Palestinian Africa. He was subjected to great torment and died by a sword in Ethiopia.

2. ST. JOHN THE APOSTLE

He is the youngest of the apostles. Jesus called his half brother, the apostle James, "sons of thunder" for their rebellious description. He was the son of Jebedee and Salome. He was a fisherman. Preached in Asia Minor and Ephesus. Sentenced to death, he was thrown into a cauldron full of boiling water and oil, but miraculously escaped and was exiled to the island of Patmos, where he wrote his Book of Revelation. He was later released from prison and died a natural death of old age.

3. JAMES THE APOSTLE

The son of Zebedius, the brother of the apostle John, is also called Senior or Elder, in contrast to the other apostle James the Junior. He was a fisherman by profession. As a powerful and authoritative church leader, James was beheaded in Jerusalem by order of King Herod.

4. Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ճանչցուած է նաեւ Նաթանայէլ անունով: Ան գալիլեայի Կանա քաղաքէն էր Եղած է Փոքր Ասիոյ երկիրներու առաքեալ: Քարոզած է Պարսկաստանի եւ Հայաստանի մէջ: Թաղէոս առաքեալի հետ կը համարուի Հայ Եկեղեցւոյ հիմնադիրը: Մորթագերծ ըլլալով նահատակուած է Սանատրուկ արքայի կողմէ:

5. Ս. ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Պետրոս յունարէն կը նշանակէ վէմ: Թլփատութեան անունը Շմաւոն է, որ յունական ձեւով կ'ըլլայ Սիմոն կամ Սիմէոն: Յովնանի որդին էր եւ Անդրէաս առաքեալի եղբայրը: Յիսուս զինք «Կեփաս» անուանած է, որ արամերէն կը նշանակէ վեմ, ժայռ: Եղած է ձկնորս եւ քարոզած է Յուդայի, Անտիոքի եւ Հռոմի մէջ: Գլխավայր խաչուելով կը նահատակուած է Հռոմի մէջ: Ըստ եկեղեցական ավանդութեան, զինք չարչարողներէն կը խնդրէ գլխավայր խաչել, որովհետեւ ինքզինք անարժան կը նկատէ Քրիստոսի խաչելու ձեւով նահատակուելու:

6. Ս. ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Կը համարուի Քրիստոսի 13-րդ առաքեալը. Կիլիկիոյ Տարսոն քաղաքէն էր եւ Հռոմի քաղաքացի: Հրէական անունն էր Սաւուղ, յունականը՝ Սօղոս: Քարոզած է Դամակոսի, Անտիոքի, Երուսաղէմի, Կիպրոսի, Պամփիլիայի, Լիւստրայի, Փռուգիայի, Յունաստանի, Հռոմի եւ այլ տեղեր: Աւանդութեան համաձայն, Հռոմի մէջ սոսկալի հալածանքներու եւ չարչարանքներու ենթարկուելէ ետք, քրիստոնեաները հալածող Ներոն կայսեր կողմէ սուրով գլխատուած է Ք.Ե. 67 թուականին: Պօղոս առաքեալ համբերութեամբ տարած է ամէն տեսակի զրկանք ու բանտարկութիւն: Բանտարկութեան երկար տարիները առիթ եղած են, որ հռոմէական զանազան քաղաքներու մէջ իր հաստատած քրիստոնեայ համայնքներուն եւ եկեղեցիներուն համար, զրի առնէ առաքելական իր նամակներուն մեծ մասը, որոնք քրիստոնէական վարդապետութեան կարեւոր ուսուցումներ եւ յորդորներ են ու կը կազմեն Նոր Կտակարանի կարեւոր մէկ բաժինը:

4. APOSTLE BARTOGHIMEOS

Also known as Nathaniel. He was from Cana in Galilee. He was an apostle to Asia Minor. Preached in Persia and Armenia. Together with the apostle Thaddeus, he is considered the founder of the Armenian Church. Being skinless, he was martyred by King Sanatruk.

5. PETER THE APOSTLE

Peter in Greek means rock. His given name when he was circumcised is Simeon, which in Greek means Simon or Simeon. He was the son of Jonah and the brother of the apostle Andrew. Jesus called him "Cephas", which means rock. He was a fisherman and preached in Judah, Antioch, and Rome. He was crucified and martyred in Rome. According to church tradition, he asked his tormentors to crucify him upside down because he considered himself unworthy to be martyred in the way Christ was crucified

6. PAUL THE APOSTLE

He is considered the 13th apostle of Christ . He was from the city of Tarsus in Cilicia and a citizen of Rome. The Jewish and Greek name was Saul. He preached in Damascus, Antioch, Jerusalem, Cyprus, Pampulia, Lystra, Phrygia, Greece, Rome, and elsewhere. According to legend, after being horribly persecuted and tortured in Rome, Nero, who persecuted Christians, was beheaded with a sword by the emperor. In the year 67. The apostle Paul patiently endured all kinds of deprivation and imprisonment. His many years of imprisonment led him to take most of his apostolic letters to the Christian communities and churches he had established in various Roman cities, which are important teachings and exhortations of Christian doctrine and form an important part of the New Testament.

7. Ս. ՍԻՄՈՆ ԱՌԱՔԵԱԼ

Կոչուած է նաեւ «Նախանձայոյց» եւ «Կանանացի»: Քարոզած է Ափրիկէի, Մեծն Բրիտանիոյ եւ Պարսկաստանի, ուր եւ նահատակուած է խաչի վրայ:

8. Ս. ՓԻԼԻՊՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Բեթսայիդայէն էր ուսումնասիրած է փոքրիկ տղայի մէջ: Նահատակուած է խաչի վրայ:

9. Ս. ԱՆԴՐԷԱՍ ԱՌԱՔԵԱԼ

Պետրոս առաքեալի եղբայրը, նոյնպէս՝ ձկնորս: Սկիզբը աշակերտած է Յովհաննէս առաքեալին, ապա եղբոր հետ առաջինը հետեւած է Յիսուսի: Քարոզած է Սկիւթիայի, Յունաստանի եւ Փոքր Ասիոյ մէջ: Յունաստանի Բադրաս քաղաքին մէջ X ձեւ խաչափայտի վրայ նահատակուած է: Եօթ գինուորները զինք խոչտանքելէ եւ մտրակի հարուածներով չարչարելէ ետք, խաչին վրայ կը կապեն՝ տառապանքը երկարաձգելու համար: Առաքեալին հետեւորդները կը պատմեն, թէ Անդրէաս երբ զէպի խաչ կ'ընթանար, հետեւեալ բառերով կ'ողջունէր մահաբեր գործիքը. «Երկար ատենէ կը փափաքէի եւ կը ցանկայի երջանիկ այս պահը, որովհետեւ մեր Տէրը, Յիսուս Քրիստոս, անոր վրայ խաչուելով սրբագործած էր մահուան այս անարգ գործիքը»: Նահատակուող առաքեալը զինք չարչարողներուն երկու օր շարունակ կը քարոզէ, մինչեւ որ ուժաքամ ըլլալով կը վախճանի:

10. Ս. ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔԵԱԼ

Գալիլեայէն էր: Դէպի Հնդկաստան իր քարոզութեան եւ առաքելական ուղևորութեան մը ընթացքին, նահատակուած է նիգակի հարուածով, երբ երկրի հարաւային շրջաններուն մէջ կ'աշխատէր քրիստոնեայ եկեղեցի ու համայնքներ ստեղծել:

7. SIMON THE APOSTLE

Also called "Envy" and "Canaanite". He preached in Africa, Great Britain and Persia, where he was martyred on the cross.

8. PHILIP THE APOSTLE

He was from Bethsaida and preached in Prussia. He was martyred on the cross.

9. ANDREAS THE APOSTLE

The brother of the apostle Peter, also a fisherman. First he was a disciple of the apostle John, then he followed Jesus with his brother. Preached in Scythia, Greece, and Asia Minor. In the Greek city of Badras, was martyred on a cross like the figure X. After being tortured and beaten with whips, seven soldiers tied him to a cross to prolong his suffering. The apostle's followers say that when Andreas walked to the cross, he greeted the deadly instrument with the following words: "I have longed for this happy moment, because our Lord Jesus Christ crucified this infamous instrument of death." The martyred apostle preaches to those who torment him for two days, until he dies from weakness.

10. THOMAS THE APOSTLE

He was from Galilee. During his preaching and apostolic journey to India, he was martyred by a spear while trying to establish Christian churches and communities in the southern regions of the country.

11. Ս. ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ծանօթ է նաեւ Ղերէոս եւ Յուդա անունով: Որդին էր Ալփէոսի եւ Մարիամի, որուն համար ալ կոչուած է նաեւ Ալփեան՝ եղբօր՝ Յակոբոսի հետ: Քրիստոսի աւետարանը քարոզած է Եդեսիոյ եւ Հայաստանի մէջ: Նահատակուած է քարկոծուելով, Սանատրուկ արքայի հրամանով, երբ մերժած է ուրանալ Քրիստոսի հաւատքը:

12. Ս. ՄԱՏԱԹԻԱ

Մատաթիա կը նշանակէ «Տիրոջ Պարգեւ»: Յուդայի քաղաքացի էր: Քարոզած է Հրէաստանի եւ Եթովպիոյ մէջ: Յիսուսը մատնող դաւաճան Յուդա Իսկարիովտացիին փոխարէն վիճակահանուած ընտրուած Մատաթիան՝ քարկոծուած ու ապա գլխատուած է:

13. Ս. ՄԱՐԿՈՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉ

Եգիպտոսի Ադեքսանդրիա քաղաքին մէջ, ձիու մը պոչին կապուած եւ քաղաքի թաղերուն մէջէն քաշկռտուելով՝ չարաչար նահատակուած է:

14. Ս. ՂՈՒԿԱՍ ԱԻԵՏԱՐԱՆԻՉ

Քրիստոսի փրկութեան աւետարանը քարոզելուն համար, Յունաստանի մէջ կախաղան բարձրացուած է:

11. THADDEUS THE APOSTLE

He is also known as Jebus and Judas. He was the son of Alpheus and Mary, for whom Alpheus is also called, along with his brother James. He preached the gospel of Christ in Edesia and Armenia. He was stoned to death by order of King Sanatruk, when he refused to deny the faith of Christ.

12. MATTHIAS THE APOSTLE

Matthias means “Gift of the Lord”. He was a citizen of Judah. Preached in Judea and Ethiopia. Matthias, chosen by lot instead of Judas Iscariot, the traitor who betrayed Jesus, was stoned and then beheaded.

13. MARK THE EVANGELIST

In the city of Alexandria, Egypt, he was brutally martyred by being tied to a horse's tail and dragged through the city's neighborhoods.

14. LUKE THE EVANGELIST

He was erected on the gallows in Greece for preaching the gospel of Christ's salvation.

Ա Ղ Օ Թ Ք

Պահպանիչ եւ յոյս բոլոր հաւատացեալներուն՝ Քրիստոս Աստուած մեր, Յայաստանեայց առաքելական Սուրբ Եկեղեցին անսասան պահէ, եւ հաւատացեալներուն մէջ աստուածգիտութեանդ լոյսն ու սերը բորբոքէ: Յայաստանի եւ Արցախի հանրապետութիւններն ու Յայոց բանակը ամրացուր, եւ Յայ ազգի միասնակամութիւնը անխախտ պահէ: Օրհնէ՛ համայն հաւատացեալ ժողովուրդը թու սուրբ Խաչիդ ամենակարող զօրութեամբը: Փրկէ, ազատէ, երեւելի եւ աներեւոյթ ամէն տեսակ թշնամիներէ ու փորձութիւններէ, եւ մանաւանդ պսակածել ժահրի սպառնալիքէն: Նահատակներու հոգիները երկնքի արքայութեանդ արժանացուր եւ անոնց պարագաները Քու Սուրբ Յոգիովդ մխիթարէ: Գերիները իրենց կապանքներէն ազատէ, եւ գաղթականներուն տուն դարձը ապահովէ: Մարմնով, մտքով, սրտով ու հոգիով վիրաւորեալներուն բժշկութիւն պարգեւէ եւ արժանի ըրէ մեզ՝ գոհութեամբ փառաւորելու Ամենասուրբ Երրորդութիւնդ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:



Ա Ղ Օ Թ Ք Բ Ժ Շ Կ Ո Ւ Թ Ե Ա Ն

Փարատէ՛ ցաւերն ու բժշկէ՛ ժողովուրդիդ հիւանդութիւնները Տէր Աստուած մեր, եւ Քու ամենայաղթ Խաչիդ նշանով կատարեալ առողջութիւն շնորհէ՛ բոլորին. որով, Քու խաչովդ մարդոց տկարութիւնը վերցուցիր, եւ մեր կեանքի ու փրկութեան թշնամին դատապարտեցիր:

Դու՛ն ես մեր կեանքն ու փրկութիւնը բարերար եւ բազումողորմ Աստուած. միայն դուն կրնաս մեր մեղքերուն թողութիւն շնորհել, եւ ախտերն ու հիւանդութիւնները հեռացնել, որովհետեւ միայն Քեզի յայտնի են մեր կարիքները:

Ո՛վ բարիքներ պարգեւող, Քու առատ ողորմութիւնդ պարգեւէ արարածներուդ, իւրաքանչիւրին իր կարիքին համեմատ. որպէսզի միշտ փառաւորուելով գովաբանուի ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

A PRAYR

May God, the preserver and hope of all believers, keep the covenant of the unity of the Armenian people inviolable, keep the Armenian Apostolic Holy Church unshakable and inflame theology and love in the believers, strengthen the nations of Armenia and Artsakh and the Armenian army. Under the umbrella of your cross. Save, deliver, from all visible and invisible enemies and temptations. Make the souls of the martyrs worthy of the kingdom of heaven and comfort them with Your Holy Spirit. Calm the hearts of the relatives of the missing, make the captives safe, ensure the return of the refugees, and heal the wounded physically, mentally, emotionally and spiritually. Make us worthy to glorify the Most Holy Trinity with gratitude. Now and always and forever and ever. Amen:

A Prayer for the Healing of the Sick

Lord our God, take away the pain and heal the sickness of your people. Grant them all complete health by the sign of your all-triumphant cross, by which you took away the frailty of the human race and condemned the adversary for our life and salvation. You are our life and salvation, O good and merciful God. You alone are able to forgive sins and to drive pain and sickness out of us, and you know how to cure our afflictions. O Giver of good gifts, give your creatures the gift of your abundant mercy, each according to their needs. Let us always glorify and praise the all-holy Trinity, now and always and unto the ages of ages. Amen.